Funded by the European Union

# ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

## ՊԱՐԶԵՑՎԱԾ ԲՅՈՒՋԵ-2024

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ (EDRC)

Հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ:
Բովանդակության համար պատասխանատվություն է կրում
Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոնը և պարտադիր չէ,
որ արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

Հրապարակումից օգտվելիս պատշաճ հղումը պարտադիր է:

© ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ, 2024

# ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոնը (EDRC)՝ Իրավաբանների հայկական ասոցիացիան և Ագորա Սենթրլ Յուրոփ կազմակերպությունները համագործակցաբար իրականացնում են «Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագիրը՝ Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ:

Ծրագրի նպատակն է նպաստել պետական բյուջետային գործընթացներին քաղաքացիական հասարակության մասնակցության ընդլայնմանը, խթանել Հայաստանում ներառական և թափանցիկ բյուջետային գործընթացները:

Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոնը (EDRC) հանրային ծրագրերի և քաղաքականությունների մոնիտորինգին և վերլուծությանն ուղղված ոչ առևտրային նախաձեռնություն է: Կարևորելով հանրային միջոցներով հանրության համար իրականացվող ծրագրերի նպատակայնությունը, հասցեականությունը, իրականացման արդյունավետությունը և հանրության գոհունակությունը՝ Կենտրոնը փորձում է պրոֆեսիոնալ ներդրում ունենալ քաղաքականությունների մշակման և քննարկման գործընթացներում:

Ծրագրի շրջանակներում Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոնն իրականացնում է բյուջետային գործընթացների վերաբերյալ քաղաքացիական հասարակության տեղեկացվածության մակարդակի բարելավման, բյուջետային գիտելիքի և բուջետային գործընթացին մասնակցելու կարողությունների ձևավորման, քաղաքականությունների մշակման և իրականացման գործընթացներին ՔՀԿ-ների արդյունավետ մասնակցության աջակցության միջոցառումներ, այդ թվում՝ բյուջետային տեղեկատվության պարզեցումներ և այլն:

**Գյուղատնտեսության 2024** թվականի պարզեցված բյուջեն վերլուծական հրապարակում է՝ ուղղված հանրության լայն շրջանակի: Այն նպատակ ունի բարձրացնել հանրության իրազեկվածության մակարդակը, հիմքեր ստեղծել քաղաքացիական հասարակության և հանրային հատվածի արդյունավետ երկխոսության և տեղեկացված քննարկումների համար:

Տեղեկատվության հիմնական աղբյուրը պետական բյուջեի մասին ՀՀ օրենքներն են և պետական բյուջեի կատարման հաշվետվությունները, պաշտոնական այլ փաստաթղթեր և տվյալներ: Պետական բյուջեին վերաբերող 2024 թվականի համար բերվող տվյալները ծրագրային են, 2023-ի և նախորդող բոլոր տարիների տվյալները փաստացի են: Փաստաթղթում գյուղատնտեսության ծախսերը նույնականացվում են ՀՀ Էկոնոմիկայի նախարարության գյուղատնտեսական բյուջետային ծրագրերին ուղղված ծախսերի հանրագումարի հետ:

© ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ, 2024

# ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

| | |
|---|---|
| ԱՄՆ | Ամերիկայի Միացյալ Նահանգներ |
| ԵՄ | Եվրոպական միություն |
| ԷՆ | Էկոնոմիկայի նախարարություն |
| հա | հեկտար |
| ՀՀ | Հայաստանի Հանրապետություն |
| ՀՆԱ | համախառն ներքին արդյունք |
| ՄԺԾԾ | Միջնաժամկետ ծախսերի ծրագիր |
| մլն | միլիոն |
| մլրդ | միլիարդ |
| ՏԶՀԿ | Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն |

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


05 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ

07 ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԲՅՈՒՋԵՆ

08 ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԾԱԽՍԵՐԸ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՄԲ

09 ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԱՃԸ

10 ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

11 ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

12 ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ԸՍՏ ԾՐԱԳՐԵՐԻ

13 ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԱՃԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ

- 2024 թվականի պետական բյուջեն հաստատվել է եկամուտների գծով 2,723.6 մլրդ դրամ, ծախսերի գծով՝ 3,206.5 մլրդ դրամ և դեֆիցիտի գծով՝ 482.9 մլրդ դրամ, կամ ՀՆԱ-ի համապատասխանաբար 25.9, 30.5 և 4.6 տոկոսը:
- Գյուղատնտեսությանն ուղղված ծախսերը պետական բյուջեում ներկայացված են գյուղատնտեսական ծրագրերով, որոնք համակարգվում են ՀՀ Էկոնոմիկայի նախարարության կողմից:
- Գյուղատնտեսությունը համարվում է պետական քաղաքականության գերակա ուղղություններից: Գյուղատնտեսության զարգացման պետական քաղաքականության հիմնական նպատակը գյուղատնտեսության մրցունակության բարելավումն է, գյուղատնտեսության արդյունավետության բարձրացումը և գյուղատնտեսական ամբողջ արժեշղթայում ընդգրկված սուբյեկտների՝ գյուղացիական տնտեսությունների, կոոպերատիվների, գյուղատնտեսական մթերքներ վերամշակողների, սպասարկող ենթակառուցվածքների եկամուտների ավելացումը:
- 2024 թվականին գյուղատնտեսական ծրագրերին կուղղվի 44.5 մլրդ դրամ, որը նախորդ տարվա մակարդակը գերազանցում է ավելի քան 2.9 մլրդ դրամով կամ 7.1 տոկոսով:
- ՀՆԱ-ի նկատմամբ գյուղատնտեսության ծրագրերին ուղղված ծախսերի կշիռը 2024-ին կկազմի 0.4 տոկոս՝ 2019-2023թթ. 0.3 տոկոս միջին մակարդակի պայմաններում:
- Պետական բյուջեի ընդամենը ծախսերի նկատմամբ գյուղատնտեսության ծախսերը կկազմեն 1.4 տոկոս՝ նախորդ տարվա համեմատությամբ նվազելով 0.2 տոկոսային կետով:
- Գյուղատնտեսության ոլորտի ֆինանսավորման աճի միջին տեմպը 2020-2024թթ. կազմել է 48.2 տոկոս, որը 33.5 տոկոսային կետով գերազանցում է նույն ժամանակահատ-վածում պետական բյուջեի ընդամենը ծախսերի միջին տարեկան աճը:
- Գյուղատնտեսության ֆինանսավորման աճը 2023 և 2024 թվականներին կրճատվել է՝ կազմելով համապատասխանաբար 11.3 և 7.1 տոկոս՝ զիջելով պետական բյուջեի ծախսերի համապատասխան աճի տեմպերը:
- Գյուղատնտեսության զարգացման պետական քաղաքականությունը 2024-ին կիրականացվի թվով 5 բյուջետային ծրագրերի միջոցով:
- Ֆինանսավորման ծավալով գյուղատնտեսության ծրագրերի շարքում առաջատարը **Գյուղատնտեսության արդիականացման ծրագիրն** է: Այս ծրագրի ֆինանսավորումը կազմում է Գյուղատնտեսության բյուջեի 57.2 տոկոսը: Հաջորդում է **Գյուղատնտեսության խթանման ծրագիրը**՝ 37.0 տոկոս կշռով:
- Գյուղատնտեսության բյուջեի աճը 2024-ին կկազմի 2.94 մլրդ դրամ՝ հիմնականում պայմանավորված Գյուղատնտեսության արդիականացման ծրագրի բյուջեի 7.93 մլրդ դրամ աճով և Բուսաբուծության խթանում և բույսերի պաշտպանություն ծրագրի բյուջեի 4.77 մլրդ դրամ կրճատմամբ:

- **Գյուղատնտեսության արդիականացման ծրագիրն** ուղղված է գյուղատնտեսական առանձին ուղղությունների զարգացման աջակցությանը: Մասնավորապես, ծրագրի շրջանակներում աջակցություն է տրամադրվում հետևյալ հիմնական ուղղություններով՝
  - Ինտենսիվ այգեգործություն
  - Գյուղատնտեսական տեխնիկայի և սարքավորումների լիզինգ
  - Ոռոգման արդիական համակարգերի և կարկտապաշտպան ցանցերի ներդրում
  - Անասնապահության զարգացում
  - Ջերմոցային տնտեսությունների ներդրում
  - Գյուղատնտեսական մշակաբույսերի մշակություն:
- Գյուղատնտեսության արդիականացման ծրագրի բյուջեի մոտ 68.6 տոկոսն ուղղվում է ինտենսիվ այգեգործության զարգացման աջակցությանը: Այս ուղղությամբ կատարվող ծախսերը նախորդ տարվա համեմատությամբ կաճեն 39 տոկոսով և կկազմեն ավելի քան 17.4 մլրդ դրամ:
- Ինտենսիվ այգիների հիմնման ծավալները 2024-ին կտրուկ կնվազեն՝ կազմելով ընդամենը 87.9 հա: Այգեհիմնման ամենամեծ ծավալները գրանցվել են 2022-ին, երբ հիմնվել են մոտ 2,333.1 հա մակերեսով այգիներ:
- Ծրագրի շրջանակներում 2024-ից մեկնարկել են երեք նոր միջոցառումներ՝ ուղղված 1/ խոշոր ջերատների ներդրման և 2/ գուղատնտեսական մշակաբույսերի մշակության աջակցությանը, ինչպես նաև 3/ արտերկրից բարձր մթերատու ոչխարի և այծերի ցեղերի, տոհմային կենդանիների ներկրման փոխհատուցումներին:
- 2020-2023 թվականների ընթացքում աջակցություն են ստացել և կառուցվել են մոտ 6.54 հա ընդհանուր մակերեսով փոքր և միջին ջերմոցային տնտեսություններ: նախատեսվում է, որ 2024-ին կկառուցվեն ևս 1.7 հա մակերոսով նման տնտեսություններ:
- **Գյուղատնտեսության խթանման ծրագրի** շրջանակներում կմեկնարկեն 1/անասնաբուծության ճյուղում իրականացվող ներդրումային ծրագրերի, 2/ գյուղատնտեսական նշանակության հողերի միավորման և 3/արդյունաբերական խեցգետնաբուծության զարգացման աջակցության միջոցառումներ: Ընդ որում, մասնավորապես անասնաբուծության զարգացմանն ուղղված ներդրումային ծրագրերին նախատեսվում է ուղղել 2.4 մլրդ դրամ:
- Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման շրջանակներում ապահովագրվող տարածքները 2024-ին կկազմեն 15,000 հա:
- Կտրուկ կնվազի կոնյակի սպիրտի արտահանման աջակցությանն ուղղվող ռեսուրսները և կդադարի խաղողի մթերումներ իրականացնող տնտեսավարող սուբյեկտներին սուբսիդավորումը:
- Զարգացման ֆրանսիական գործակալության աջակցությամբ նախատեսվում է ՀՀ Արմավիրի և Արարատի մարզերում 2,000 հա հողատարածքներում ներդնել ժամանակակից ոռոգման համակարգեր:
- 2024-ին կդադարի աշնանացան ցորենի արտադրության խթանման նպատակով փոխհատուցման տրամադրման աջակցությունը:

# ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԲՅՈՒՋԵՆ

## Գյուղատնտեսական ծրագրերի բյուջեն և դրա տարեկան աճը (%) 2019-2024թթ.




Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

## Գյուղատնտեսական ծրագրերի բյուջեի կշիռը պետական բյուջեի ընդամենը ծախսերում և ՀՆԱ-ում, 2019-2024թթ., տոկոս




Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն, ՀՀ վիճակագրական կոմիտե

- 2024 թվականին պետական բյուջեից գյուղատնտեսական ծրագրերին կուղղվի 44.5 մլրդ դրամ, որը նախորդ տարվա ֆինանսավորման մակարդակը կգերազանցի 7.1 տոկոսով կամ 2.9 մլրդ դրամով:
- Գյուղատնտեսության ֆինանսավորումն աճող է: 2020-2024 թվականների համար ֆինանսավորման ծավալների միջին տարեկան աճը կկազմի 48.2 տոկոս: Արդյունքում, 2019-ի գյուղատնտեսության ֆինանսավորման ծավալները կգերազանցվեն ավելի քան 6 անգամ կամ 37.3 մլրդ դրամով:

- 2024 թվականին գյուղատնտեսության բյուջեն կկազմի պետական բյուջեի ընդամենը ծախսերի 1.4 տոկոսը՝ զիջելով 2023-ի մակարդակը 0.2 տոկոսային կետով: Դիտարկվող ժամանակահատվածում այս ցուցանիշն իր առավելագույն մակարդակին է հասել 2022 թվականին՝ կազմելով 1.7 տոկոս:
- Գյուղատնտեսության ծախսեր/ՀՆԱ հարաբերակցությունը վերջին երեք տարիներին պահպանվում է 0.4 տոկոս մակարդակում, ինչը գերազանցում է 2019-ի նույն ցուցանիշը 0.3 տոկոսային կետով:

# ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԾԱԽՍԵՐԸ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՄԲ

- Ավելի երկար ժամանակահատվածում՝ 2008-2024թթ., գյուղատնտեսությանն ուղղված ծախսերի դինամիկան ուսումնասիրելու, ինչպես նաև այլ ոլորտների հետ համեմատություններ իրականացնելու համար դիտարկենք բյուջետային ծախսերը գործառական դասակարգմամբ:
- Գյուղատնտեսության ծախսերն այս ընթացքում դրսևորում են անկայուն և մեծ տատանումներ: Նվազագույն մակարդակը գրանցվել է 2011-ին՝ 5.8 մլրդ դրամ:
- Գյուղատնտեսության ծախսերի կշիռը բյուջետային ծախսերում հիմնականում նույն վարքագիծն է դրսևորել՝ տատանվելով 0.5-1.9 տոկոս միջակայքում: Ընդ որում, դիտարկվող ժամանակահատվածում ամենացածր մակարդակը արձանագրվել է 2019-ին, իսկ ամենաբարձրը՝ 2016-ին:

**Գյուղատնտեսության ֆինանսավորումը, 2008-2024թթ., գործառական դասակարգում, մլրդ դրամ**




Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

**Առանձին ոլորտների մասնաբաժինը պետական բյուջեի ընդամենը ծախսերում, 2024թ., գործառական դասակարգում, տոկոս**




**Գյուղատնտեսության մասնաբաժինը պետական բյուջեի ընդամենը ծախսերում, 2008-2024թթ., գործառական դասակարգում, տոկոս**




Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

# ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԱՃԸ

- Գյուղատնտեսության ծրագրերի ֆինանսավորման աճի միջին տեմպը 2020-2024թթ. կազմել է 48.2 տոկոս, որը 33.5 տոկոսային կետով գերազանցում է նույն ժամանակահատվածում պետական բյուջեի ընդամենը ծախսերի միջին տարեկան աճը:

- Գյուղատնտեսությանն ուղղված ծախսերը 2020-2022 թվականներին բյուջեի ընդամենը ծախսերի համեմատությամբ դրևորել են առաջանցիկ աճի տեմպեր, ինչը փոխվել է 2023 և 2024 թվականներին՝ կրճատվելով մինչև 11.3 և 7.1 տոկոս:

- Գյուղատնտեսության բյուջետային ծախսերի 2024-ին նախատեսված 7 տոկոս աճը զիջում է նաև տնտեսության հիմնական ոլորտների ֆինանսավորման աճերին: Այսպես, կրթության ոլորտի բյուջեի աճին զիջում է մոտ 51 տոկոսային կետով, տնտեսական հարաբերություններին՝ 27, առողջապահությանը՝ 13, իսկ սոցիալական պաշտպանությանը՝ 6 տոկոսային կետերով: Համեմատվող ոլորտներից միայն պաշտպանության դեպքում է բյուջետային ծախսերի աճը մոտ 1 տոկոսային կետով ավելի ցածր, քան գյուղատնտեսությանն է:

**Պետական բյուջեի և գյուղատնտեսության բյուջեի ծախսերի աճի դինամիկան, 2020-2024թթ., ծրագրային դասակարգում, տոկոս**




**Առանձին ոլորտների բյուջետային ծախսերի աճը 2020-2024թ., գործառական դասակարգում, տոկոս**




Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

# ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

Գյուղատնտեսության ոլորտի զարգացման պետական քաղաքականության ծրագրային հիմքը ՀՀ կառավարության ծրագիրն է: Գործում են նաև երեք հայեցակարգային, ռազմավարական փաստաթղթեր:

Նշված ռազամավարական փաստաթղթերը հետևյալն են.

- «ՀՀ գյուղատնտեսական ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020-2030թթ. ռազմավարություն»[1],
- «Գյուղատնտեսական նշանակության հողերի օգտագործման արդյունավետության բարձրացման հայեցակարգ»[2],
- «Պարենային անվտանգության համակարգի զարգացման ռազմավարություն և 2023-2026թթ. գործողությունների ծրագիր»[3]:

ՀՀ կառավարությունը հաստատել է նաև կոնկրետ ուղղություններով գյուղատնտեսության զարգացմանն աջակցող նպատակային ծրագրեր [4]:

2020-2030թթ. ռազմավարությունը համապարփակ կերպով անդրադառնում է գյուղատնտեսության ոլորտում առկա ընդհանուր իրավիճակին, զարգացման մարտահրավերներին ու խնդիրներին, սահմանում է ռազմավարական հետևյալ յոթ առաջնահերթությունները.

- բարձրացնել գյուղատնտեսության ոլորտի մրցունակությունը և արդյունավետությունը,
- ապահովել սննդամթերքի անվտանգությունը,
- բարելավել պարենային անվտանգությունը և սնուցումը,
- զարգացնել տեղական շուկաները և ավելացնել արտահանման հնարավորությունները,
- զարգացնել մարդկային և ինստիտուցիոնալ կարողությունները,
- աջակցել գյուղական համայնքների կայուն զարգացմանը,
- խթանել թվային գյուղատնտեսությունը և տեխնոլոգիական նորարարությունները:

[1] ՀՀ կառավարություն, 19.12.2019, 1886-Լ որոշում
[2] ՀՀ կառավարություն, 24.01.2020, 68-Լ որոշում
[3] ՀՀ կառավարության 29.06.2023, 1083-Լ որոշում
[4] https://mineconomy.am/page/1338

# ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

- Գյուղատնտեսության զարգացման պետական քաղաքականությունը 2024-ին կիրականացվի թվով 5 բյուջետային ծրագրերի միջոցով.

| ԾՐԱԳԻՐ | 2023 մլն դրամ | 2024 մլն դրամ | 2024 տոկոս | 2024/2023 տոկոս |
|---|---|---|---|---|
| **Գյուղատնտեսության արդիականացման ծրագիր** | 17,521 | 25,447 | 57.2 | +45.2 |
| **Գյուղատնտեսության խթանման ծրագիր** | 16,177 | 16,466 | 37.0 | +1.8 |
| **Անասնաբուժական ծառայություններ** | 2,454 | 1,955 | 4.4 | -20.3 |
| **Բուսաբուծության խթանում և բույսերի պաշտպանություն** | 4,899 | 125 | 0.3 | -97.4 |
| **Գյուղական ենթակառուցվածքների վերականգնում և զարգացում** | 67 | 528 | 1.2 | +694.3 |
| **Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցություն** | 468 | - | - | - |
| **ԸՆԴԱՄԵՆԸ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ** | **41,585** | **44,522** | **100.0** | **+7.1** |

# ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ԸՍՏ ԾՐԱԳՐԵՐԻ




Գյուղատնտեսության արդիականացման ծրագիր




Գյուղատնտեսության խթանման ծրագիր




Անասնաբուժական ծառայություններ

Գյուղական ենթակառուցվածքների վերականգնում և զարգացում

Բուսաբուծության խթանում և բույսերի պաշտպանություն

- Գյուղատնտեսության ոլորտի ամենամեծ բյուջետային ծրագիրը **Գյուղատնտեսության արդիականացման ծրագիրն** է, որին կուղղվի գյուղատնտեսության ծախսերի 57.2 տոկոսը:
- Հաջորդ մեծ ծրագիրն է՝ **Գյուղատնտեսության խթանման ծրագիրը:** Վերջինիս կուղղվի գյուղատնտեսության ծախսերի 37 տոկոսը:
- Մյուս երեք ծրագրերը միասին ապահովում են գյուղատնտեսության ծախսերի ընդամենը 5.9 տոկոսը:

## ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԱՃԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ




1022 Գյուղատնտեսության խթանման ծրագիր

1059 Բուսաբուծության խթանում և բույսերի պաշտպանություն

1086 Գյուղական ենթակառուցվածքների վերականգնում և զարգացում

1116 Անասնաբուժական ծառայություններ

1134 Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցություն

1187 Գյուղատնտեսության արդիականացման ծրագիր

Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

- Գյուղատնտեսության ծրագրերի բյուջեի աճը 2024-ին կկազմի 2.94 մլրդ դրամ:
- Գյուղատնտեսության բյուջեի աճը հիմնականում պայմանավորված է Գյուղատնտեսության արդիականացման ծրագրի բյուջեի 7.93 մլրդ դրամ աճով և Բուսաբուծության խթանում և բույսերի պաշտպանություն ծրագրի բյուջեի 4.77 մլրդ դրամով կրճատմամբ:
- Գյուղատնտեսության արդիականացման ծրագրի բյուջեի նման մեծ աճն իր հերթին ՀՀ-ում ինտենսիվ այգեգործության զարգացման նպատակով սուբսիդավորման աճող ծավալների հետևանք է: Բուսաբուծության խթանում և բույսերի պաշտպանություն ծրագրի բյուջեի նվազումը պայմանավորված է աշնանացան ցորենի արտադրության խթանման նպատակով փոխհատուցման տրամադրման դադարեցմամբ (մանրամասները տե՛ս համապատասխան ծրագրերի բաժիններում):
- Գյուղական ենթակառուցվածքների վերականգնում և զարգացում ծրագրի բյուջեն ևս էապես կաճի՝ 461.9 մլն դրամով կամ՝ գրեթե 8 անգամ:
- 2023-ին ավարտվել է և 2024-ին չի գործի Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցություն ծրագիրը, որի շրջանակներում իրականացվում էին Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի և Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի աջակցությամբ ենթակառուցվածքների և արտադրողականության աճին ուղղված միջոցառումներ:
- Մեծ է նաև Անասնաբուժական ծառայություններ ծրագրի բյուջեի նվազումը՝ 498.8 մլն դրամ:

# 1187 ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

**25.5**
**մլրդ դրամ**

**ՆՊԱՏԱԿ**

Գյուղատնտեսական տեխնիկական համակարգերի արդիականացում, ինտենսիվ այգիների ներդրման և տոհմաբուծության մեջ նոր ցեղատեսակների բուծման աջակցություն:

**ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՆԿԱՐԱԳԻՐ**

Ոռոգման արդիական համակարգեր ներդրված հողատարածքների և տոհմային կենդանիների տեսակարար կշռի ավելացում:

Ծրագրի շրջանակներում պետական աջակցություն է տրամադրվում հետևյալ հիմնական ուղղություններով՝

- Ինտենսիվ այգեգործություն
- Գյուղատնտեսական տեխնիկայի և սարքավորումների լիզինգ
- Ոռոգման արդիական համակարգերի և կարկտապաշտպան ցանցերի ներդրում
- Անասնապահության զարգացում
- Ջերմոցային տնտեսությունների ներդրում
- Գյուղատնտեսական մշակաբույսերի մշակություն:

| Ծրագիր/միջոցառում | 2023 մլն դրամ | 2024 մլն դրամ | 2024 կշիռ | 2024/2023 տոկոս |
|---|---|---|---|---|
| **Գյուղատնտեսության արդիականացման ծրագիր** | 17,521.5 | 25,446.6 | 100.0 | + 45.2 |
| ՀՀ-ում խաղողի, ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող ինտենսիվ պտղատու այգիների և հատապտղանոցների հիմնման համար վարկային տոկոսադրույքների սուբսիդավորում | 2,327.8 | 2,488.6 | 9.8 | -6.9 |
| ՀՀ գյուղատնտեսական տեխնիկայի լիզինգի աջակցության ծրագիր | 809.6 | 844.1 | 3.3 | -4.3 |
| ՀՀ ագրոպարենային ոլորտի սարքավորումների լիզինգի աջակցության ծրագիր | 3,552.5 | 4,140.7 | 16.3 | +16.6 |
| Ոռոգման արդիական համակարգերի ներդրման համար տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիր | 26.4 | 45.2 | 0.2 | +71.4 |
| ՀՀ գյուղատնտեսությունում կարկտապաշտպան ցանցերի ներդրման համար տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում | 18.8 | 11.9 | 0.0 | -36.7 |
| Փոքր և միջին «Խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովմանն աջակցություն | 69.3 | 134.4 | 0.5 | +93.9 |
| ՀՀ-ում 2019-2024 թվականների տավարաբուծության զարգացման ծրագիր | 139.5 | 165.2 | 0.6 | +18.4 |
| ՀՀ-ում խաղողի, ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող ինտենսիվ պտղատու այգիների և հատապտղանոցների հիմնման համար պետական աջակցություն | 2.6 | 239.0 | 0.9 | +9,231.1 |
| Փոքր և միջին ջերմոցային տնտեսությունների ներդրման պետական աջակցության ծրագիր | 327.1 | 298.8 | 1.2 | -8.7 |
| ՀՀ-ում ոչխարաբուծության և այծաբուծության զարգացման նպատակով տրամադրվող նպատակային վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում | 15.7 | 50.6 | 0.2 | +222.0 |
| ՀՀ-ում ոչխարաբուծության և այծաբուծության զարգացման նպատակով աջակցություն | 12.8 | 7.1 | 0.0 | -44.1 |
| ՀՀ-ում ինտենսիվ այգեգործության զարգացման նպատակով սուբսիդավորում | 8,948.1 | 13,720.2 | 53.9 | +53.3 |
| ՀՀ-ում ինտենսիվ այգեգործության զարգացման նպատակով ծախսերի փոխհատուցում | 1,271.3 | 1,000.0 | 3.9 | -21.3 |
| ՀՀ-ում ջերմատնային տնտեսությունների զարգացման աջակցության ծրագիր | - | 500.0 | 2.0 | - |
| Գյուղատնտեսական մշակաբույսերի մշակության խթանման նպատակով տրամադրվող նպատակային վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում | - | 1,700.7 | 6.7 | - |
| Արտերկրից բարձր մթերատու ոչխարի և այծերի ցեղերի տոհմային կենդանիների ներկրման փոխհատուցում | - | 100.0 | 0.4 | - |

Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն, ՏԶՀԿ հաշվարկներ

**Գյուղատնտեսության արդիականացման ծրագրի ծախսերն ըստ առանձին ուղղությունների, մլն դրամ**

| | | 2023 | 2024 | 2024/2023 |
|---|---|---|---|---|
| 1. | Ինտենսիվ այգեգործության աջակցություն | 12,549.8 | 17,447.8 | 39.0 |
| 2. | Գյուղատնտեսական տեխնիկայի և սարքավորումների լիզինգի աջակցություն | 4,362.1 | 4,984.8 | 14.3 |
| 3. | Գյուղատնտեսական մշակաբույսերի մշակության աջակցություն | - | 1,700.7 | - |
| 4. | Ջերմոցային տնտեսությունների ներդրման աջակցություն | 327.1 | 798.8 | 144.2 |
| 5. | Անասնապահության աջակցություն | 237.3 | 457.3 | 92.7 |
| 6. | Ոռոգման արդիական համակարգերի և կարկտապաշտպան ցանցերի ներդրման աջակցություն | 45.2 | 57.1 | 26.4 |
| | Ընդամենը | 17,521.5 | 25,446.6 | 45.2 |




Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

- Գյուղատնտեսության արդիականացման ծրագրի ծախսերի մոտ 68.6 տոկոսը կուղղվի ինտենսիվ այգեգործության զարգացման նպատակով ծախսերի սուբսիդավորմանը և փոխհատուցմանը:
- Գյուղատնտեսական տեխնիկայի և սարքավորումների լիզինգի աջակցությանն ուղղվող ռեսուրսները կազմում են ծրագրի բյուջեի 19.6 տոկոսը:
- Ջերմոցային տնտեսությունների ներդրման աջակցությանը կուղղվի ծրագրի բյուջեի 3.1 տոկոսը՝ նախորդ տարվա նկատմամբ աճելով 1.2 տոկոսային կետով: Աճը պայմանավորված է նոր միջոցառման շրջանակներում խոշոր ջերմատների ներդրմանն ուղղվող աջակցությամբ՝ 500.0 մլն դրամ:
- Ծրագրի բյուջեի 1.8 տոկոսը կուղղվի անասնապահության զարգացմանն ուղղված միջոցառումների խմբին: Այս ռեսուրսները 2024-ին գրեթե կկրկնապատկվեն կազմելով՝ 457.3 մլն դրամ: Արտերկրից բարձր մթերատու ոչխարի և այծերի ցեղերի տոհմային կենդանիների ներկրման փոխհատուցումներին կուղղվի 100.0 մլն դրամ: Նկատենք, որ այս միջոցառումը մեկնարկել է 2024-ից:
- Ծրագրի շրջանակներում մեկնարկել է ևս մեկ նոր միջոցառում, որն ուղղված է գուղատնտեսական մշակաբույսերի մշակության աջակցությանը, մասնավորապես՝ հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսերի (18.825 հա), կարտոֆիլի (1.760 հա), բանջարային (3.282 հա) և բոստանային (743.5 հա) մշակաբույսերի մշակմանը:

# Ինտենսիվ այգեգործության զարգացման աջակցություն







## Ոռոգման արդիական համակարգերի ներդրման աջակցություն




## Կարկտապաշտպան ցանցերի ներդրման աջակցություն




- Ինտենսիվ այգեգործության զարգացման աջակցությունը 2024-ին կկազմի ավելի քան 17.4 մլրդ դրամ: Ինչպես տեսնում ենք աջակցության ֆինանսավորման ծավալներն էապես աճում են՝ ի տարբերություն հիմնվող նոր ինտենսիվ այգիների տարածքների: Ծախսերի աճը պայմանավորված է նախորդ տարիներին հիմնված այգիների վարկերի տոկոսավճարների սուբսիդավորման ծավալներով:
- Հիմնված ինտենսիվ այգիների ծավալով առանձնանում է 2022-ը, երբ հիմնվել են մոտ 2,333.1 հա մակերեսով այգիներ: 2023-ից այգեհիմնման տեմպը կրճատվել է, իսկ 2024-ի գնահատականներով կհիմվեն ընդամենը 87.9 հա մակերեսով նոր այգիներ:
- Ոռոգման արդիական համակարգերի ներդրման, ինչպես նաև կարկտապաշտպան ցանցերի ներդրման աջակցությանն ուղղվող բյուջետային ծախսերի միտումը նվազող է:
- 2024-ին այս նպատակով աջակցություններին կուղղվեն համապատասխանաբար 45.2 և 11.9 մլն դրամ բյուջետային ռեսուրսներ: Դրանք նախատեսված են նախորդ տարիներին 1,527.5 հա տարածքում ոռոգման արդիական համակարգ ներդնելու և 194.1 հա տարածքում կարկտապաշտպան ցանցային համակարգեր տեղակայելու նպատակով տրամադրված վարկերի տոկոսավճարների սուբսիդավորմանը:

# Ջերմոցային տնտեսությունների զարգացման աջակցություն

**Պետական ֆինանսավորման դինամիկան, մլն դրամ**




**Կառուցված փոքր և միջին ջերմոցների տարածքը, հա**




Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն, ՏԶՀԿ հաշվարկներ

- Ջերմոցային տնտեսությունների զարգացման աջակցությանը 2024-ին կուղղվի 798.8 մլն դրամ, որը նախորդ տարվա մակարդակը գերազանցում է ավելի քան 2.4 անգամ: Ընդ որում այս ռեսուրսների 500.0 մլն դրամը կամ 62.6 տոկոսը նախատեսված է ուղղել խոշոր ջերմոցային տնտեսությունների՝ ոչ պակաս 1 հա մակերեսով, ներդրման աջակցությանը:
- Խոշոր ջերմոցային տնտեսությունների ներդրման աջակցությունը մեկնարկել է 2024 թվականից: Գնահատվում է, որ պետական աջակցություն կտրամադրվի 2 այդպիսի տնտեսությունների ներդրմանը:
- Ծրագրի շրջանակներում 2020-2023 թվականների ընթացքում աջակցություն են ստացել կառուցված մոտ 6.54 հա ընդհանուր մակերեսով փոքր և միջին ջերմոցային տնտեսություններ:
- 2024-ին նախատեսվում է, որ կկառուցվեն ևս 1.7 հա փոքր և միջին ջերմոցային տնտեսություններ, ինչպես նաև 6.57 հա խոշոր ջերմոցային տնտեսություններ:

## Ագրոպարենային ոլորտի սարքավորումների լիզինգի աջակցություն







## Գյուղատնտեսական տեխնիկայի լիզինգի աջակցություն







Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն, ՏԶՀԿ հաշվարկներ

- Գյուղատնտեսական տեխնիկայի և սարքավորումների լիզինգի աջակցությանը 2024-ին կուղղվի մոտ 5.0 մլրդ դրամ: Մասնավորապես, ագրոպարենային ոլորտի սարքավորումների լիզինգին կուղղվի 4.1 մլրդ դրամ, իսկ գյուղատնտեսական տեխնիկայի լիզինգին՝ 844.1 մլն դրամ: Այս ցուցանիշները նախորդ տարվա մակարդակը գերազանցում են համապատասխանաբար 16.6 և 4.3 տոկոսով:
- Նախատեսված ռեսուրսները կուղղվեն սարքավորումների և գյուղատնտեսական տեխնիկայի համապատասխանաբար 1,546 և 655 տնտեսավարող սուբյեկտների նախորդ տարիներից տրամադրված, ինչպես նաև 2024-ին տրամադրվելիք վարկերի տոկոսավճարների սուբսիդավորմանը:
- 2024-ին նոր լիզինգառուների գնահատվող թվաքանակը կնվազի՝ կազմելով 250 շահառու՝ ագրոպարենային ոլորտի սարքավորունմների դեպքում և ընդամենը 40 շահառու՝ գյուղատնտեսական տեխնիկայի դեպքում:
- Ագրոպարենային ոլորտի սարքավորումների լիզինգի նկատմամբ տնտեսվարողների հետաքրքրությունը շարունակում է մնալ բավականին մեծ և կայուն, ինչն, անշուշտ, չի կարող նկատվել գյուղատնտեսական տեխնիկայի լիզինգի մասով: Վերջինիս նկատմամբ մեծ ակտիվություն է գրանցվել 2021 և 2022 թվականներին:

# Պետական ֆինանսավորման դինամիկան, մլն դրամ

Փոքր և միջին «Խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման աջակցություն




Տավարաբուծության զարգացման աջակցություն




Ոչխարաբուծության և այծաբուծության զարգացման ազակցություն




- 2024-ին փոքր և միջին ԽԵԼԱՑԻ անասնաշենքների կառուցման կամ վերակառուցման աջակցությունը կկազմի 134.4 մլն դրամ, որը նախորդ տարվա մակարդակը գերազանցում է մոտ 2 անգամ:
- Տավարաբուծության զարգացման աջակցությունը 2024-ին կկազմի 165.2 մլն դրամ, իսկ ոչխարաբուծության և այծաբուծության զարգացման աջակցությանն ուղղվող բյուջետային ծախսերը կտրուկ կաճեն կազմելով 157.8 մլն դրամ:
- Արտերկրից բարձր մթերատու ոչխարի և այծերի ցեղերի տոհմային կենդանիների ներկրման փոխհատուցման նպատակով կհատկացվեն 100.0 մլն դրամ բյուջետային ռեսուրսներ:

ԽՈՇՈՐ ԵՂՋԵՐԱՎՈՐ ՏՈՀՄԱՅԻՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ




ՄԱՆՐ ԵՂՋԵՐԱՎՈՐ ՏՈՀՄԱՅԻՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ



## 1022 ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆ ԾՐԱԳԻՐ

**16.5**
**մլրդ դրամ**

**ՆՊԱՏԱԿ**

Գյուղատնտեսական մթերքի և դրանց վերամշակումից ստացվող սննդամթերքի ծավալների ավելացում:

**ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՆԿԱՐԱԳԻՐ**

Գյուղատնտեսական մթերքների ծավալների ավելացում: Օգտագործվող վարելահողերի ավելացում: Պտուղբանջարեղենի և խաղողի վերամշակումից ստացված արտադրանքի ծավալների աճ:

Ծրագրի շրջանակներում պետական աջակցություն է տրամադրվում հետևյալ հիմնական ուղղություններով՝

- Հայկական գինիների հանրահռչակում և առաջմղում
- Հողային բարեփոխումների իրականացում
- Գյուղատնտեսության ապահովագրական համակարգի ներդրման աջակցություն
- Գյուղատնտեսական վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում:

| Ծրագիր/միջոցառում | 2023 մլն դրամ | 2024 մլն դրամ | 2024 կշիռ | 2024/2023 տոկոս |
|---|---|---|---|---|
| **Գյուղատնտեսության խթանման ծրագիր** | **16,176.6** | **16,466.5** | **100.0** | **+1.8** |
| Պետական աջակցություն Հայաստանի Հանրապետության խաղողագործության և գինեգործության ոլորտներում վարվող պետական քաղաքականության ու զարգացման ծրագրերի իրականացմանը | 176.1 | 264.0 | 1.6 | +49.9 |
| Պետական աջակցություն Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսական ծրագրերի իրականացմանը | 342.4 | 332.1 | 2.0 | -3.0 |
| Հողային բարեփոխումների փորձնական ծրագրին աջակցություն | 10.9 | 500.0 | 3.0 | +4478.1 |
| Գյուղատնտեսական վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում | 8,469.4 | 6,347.6 | 38.5 | -25.1 |
| Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում | 3,816.5 | 4,402.1 | 26.7 | +15.3 |
| Գերմանիայի զարգացման վարկերի բանկի (KFW) հետ համատեղ գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագրի իրականացման համար պետական աջակցություն | 1,099.8 | 1,521.7 | 9.2 | +38.4 |
| Անասնաբուծության ճյուղում իրականացվող ներդրումային ծրագրերին աջակցություն | - | 2,400.0 | 14.6 | - |
| Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական նշանակության հողերի միավորմանը (կոնսոլիդացիային) աջակցություն | - | 300.0 | 1.8 | - |
| Կոնյակի սպիրտի իրացման (արտահանման) աջակցության ծրագիր | 1,341.3 | 50.0 | 0.3 | -96.3 |
| Հայաստանի Հանրապետությունում արդյունաբերական խեցգետնաբուծության զարգացման ծրագիր | - | 299.0 | 1.8 | - |
| Խաղողի մթերումներ իրականացնող տնտեսավարող սուբյեկտներին սուբսիդավորում | 870.0 | - | - | - |
| Հողային բարեփոխումների փորձնական ծրագիր | 50.1 | 50.0 | 0.3 | -0.2 |

Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն, ՏԶՀԿ հաշվարկներ

- Գյուղատնտեսության խթանման ծրագրի բյուջեն կազմում է 16,466.5 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատությամբ աճել է ընդամենը 289.9 մլն դրամով կամ 1.8 տոկոսով:
- Ծրագրի բյուջեի ավելի քան 38.5 տոկոսը կուղղվի գյուղատնտեսական վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորմանը, չնայած այն հանգամանքին, որ այս ուղղությամբ ծախսվող ռեսուրսները կնվազեն 25.1 տոկոսով: Նախատեսվում է սուբսիդավորել 22,908 տնտեսավարող սուբյեկտի՝ նախորդ տարիներին տրամադրված գյուղատնտեսական վարկերը, 285 տնտեսավարող սուբյեկտի՝ 2024թ. տրամադրվելիք և նախորդ տարիներին տրամադրված գյուղատնտեսական հումքի մթերումների նպատակով վարկերը:
- Ծրագրի կառուցվածքում երկրորդ ամենամեծ միջոցառումը կամ ծրագրի բյուջեի 15.3 տոկոսը կազմում է գյուղատնտեսական հումքի մթերումների նպատակով տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորումը:
- Կտրուկ կնվազի կոնյակի սպիրտի արտահանման աջակցությանն ուղղվող ռեսուրսները և կդադարի խաղողի մթերումներ իրականացնող տնտեսավարող սուբյեկտներին սուբսիդավորումը:
- Ծրագիրը շրջանակներում կմեկնարկեն 1/անասնաբուծության ճյուղում իրականացվող ներդրումային ծրագրերի, 2/ գյուղատնտեսական նշանակության հողերի միավորման և 3/ արդյունաբերական խեցգետնաբուծության զարգացման աջակցության միջոցառումներ: Նկատենք, որ այս միջոցառումները դեռևս պլանավորվել էին 2023-ի բյուջեում, սակայն չէին իրականացվել:
- Անասնաբուծության ճյուղում ներդրումային ծրագրերի աջակցության նոր միջոցառումը հանդիսանում է ծրագրի երրորդ խոշոր ծախսային ուղղությունը, որին կուղղվի ծրագրային ծախսերի 14.6 տոկոսը կամ 2.4 մլրդ դրամ:





## 1086 ԳՅՈՒՂԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ

**0.5**
**մլրդ դրամ**

**ՆՊԱՏԱԿ**

Գյուղատնտեսության ոլորտի արդյունավետության աճ:

**ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՆԿԱՐԱԳԻՐ**

Գյուղատնտեսական արտադրանքի ծավալների ավելացում

- Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ՀՀ Արմավիրի և Արարատի մարզերում ներդնել ժամանակակից ոռոգման համակարգեր՝ գյուղացիական տնտեսվարողներին աջակցության նպատակով:
- Ծրագրի բյուջեն կազմում է 528.4 մլն դրամ, որը նախորդ տարվա համեմատությամբ աճել է 461.9 մլն դրամով կամ գրեթե 8 անգամ:

| Ծրագիր/միջոցառում | 2023 մլն դրամ | 2024 մլն դրամ | 2024 կշիռ | 2024/2023 տոկոս |
|---|---|---|---|---|
| **Գյուղական ենթակառուցվածքների վերականգնում և զարգացում** | **66.5** | **528.4** | **100.0** | **+694.33** |
| Զարգացման ֆրանսիական գործակալության աջակցությամբ իրականացվող ՀՀ Արարատի և Արմավիրի մարզերում ոռոգվող գյուղատնտեսության զարգացման դրամաշնորհային ծրագրի համակարգում և ղեկավարում | 23.2 | 200.0 | 37.8 | +762.66 |
| Զարգացման ֆրանսիական գործակալության աջակցությամբ իրականացվող ՀՀ Արարատի և Արմավիրի մարզերում Ոռոգվող գյուղատնտեսության զարգացման դրամաշնորհային ծրագիր | 2.3 | 28.4 | 5.4 | +1,114.79 |
| Զարգացման ֆրանսիական գործակալության աջակցությամբ ՀՀ Արարատի և Արմավիրի մարզերում ժամանակակից պահանջներին համապատասխան ոռոգման համակարգերի ներդրման և զարգացմանն աջակցություն | - | 300.0 | 56.8 | - |
| Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության երկրորդ ծրագրի համակարգում և ղեկավարում | 6.0 | - | - | - |
| ԱՄՆ կառավարության աջակցությամբ իրականացված «Հազարամյակի մարտահրավեր» դրամաշնորհային ծրագրի արդյունքում ձևավորված ֆինանսական միջոցների կառավարում | 35.0 | - | - | - |

Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն, ՏԶՀԿ հաշվարկներ

| | |
|---|---|
| **2,000** | Նոր տեխնոլոգիաներով ոռոգման ենթակա հողատարածքներ, 2026թ., հա |
| **20** | Ծրագրի ընթացքում մինչև 2026թ. ստեղծված կոոպերատիվների քանակ |
| **260** | Նոր տեխնոլոգիաներով ոռոգման համակարգերի մասով վերապատրաստված տնտեսավարողների քանակ, 2026թ. |

## 1059 ԲՈՒՍԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՈՒՄ ԵՒ ԲՈՒՅՍԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

**0.1**
**մլրդ դրամ**

**ՆՊԱՏԱԿ**

Հողագործությունից ստացվող արդյունքի բարելավում:

**ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՆԿԱՐԱԳԻՐ**

Մշակաբույսերի միջին բերքատվության բարձրացում: ՀՀ գյուղատնտեսական նշանակության ողջ հողատարածքի համար կազմված ագրոքիմիական քարտեզներով ապահովվածություն: Հացահատիկի և հատիկաընդեղենի արտադրության ծավալների ավելացում:

- Ծրագիրը հանդիսանում է գյուղատնտեսական ամենափոքր բյուջետային ծրագիրը, որին 2024-ին կուղղվի ընդամենը 125.4 մլն դրամ, որը նախորդ տարվա մակարդակը զիջում է մոտ 4.8 մլրդ դրամով:
- Ծրագրին ուղղվող ռեսուրսների նվազումը պայմանավորված է աշնանացան ցորենի արտադրության խթանման նպատակով փոխհատուցման տրամադրման դադարեցմամբ:

| Ծրագիր/միջոցառում | 2023 մլն դրամ | 2024 մլն դրամ | 2024 կշիռ | 2024/2023 տոկոս |
|---|---|---|---|---|
| **Բուսաբուծության խթանում և բույսերի պաշտպանություն** | **4,898.8** | **125.4** | **100.0** | **-97.44** |
| Բուսասանիտարիայի ծառայությունների, հողերի ագրոքիմիական հետազոտության և բերրիության բարձրացման միջոցառումների իրականացում | **55.0** | **47.9** | **38.2** | **-12.9** |
| Բույսերի պաշտպանության միջոցառումներ | **47.9** | **29.4** | **23.4** | **-38.7** |
| Սերմերի որակի ստուգում և պետական սորտափորձարկման միջոցառումներ | **48.1** | **48.1** | **38.3** | **0,0** |
| ՀՀ-ում աշնանացան ցորենի ցանքատարածությունների մոնիթորինգի իրականացմանն աջակցություն | **158.1** | **-** | **-** | **-** |
| ՀՀ-ում աշնանացան ցորենի արտադրության խթանման նպատակով փոխհատուցման տրամադրում | **4,589.6** | **-** | **-** | **-** |

Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն, ՏԶՀԿ հաշվարկներ

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է՝

- վնասակար օրգանիզմների հայտնաբերման նպատակով հետազոտել 180,000 հեկտար տարածք,
- 85 համայնքի տրամադրել գյուղատնտեսական նշանակության հողերի կազմված ագրոքիմիական քարտեզներ,
- գյուղատնտեսական մշակաբույսերի առավել վնասակար օրգանիզմների դեմ իրականացնել պայքար 53,000.0 հա տարածքում,
- իրականացնել բույսերի սերմերի որակի լաբորատոր հետազոտություններ և փաստաթղթավորում՝ 12 հազար տոննա,
- բույսերի նոր սորտերի ստուգիչ ցանքեր և դաշտային փորձարկումներ՝ 100 հատ:

## 1116 ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**2.0**
**մլրդ դրամ**

**ՆՊԱՏԱԿ**
Անասնահամաճարակային կայուն ֆոնի ապահովում:

**ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՆԿԱՐԱԳԻՐ**
Գյուղատնտեսական կենդանիների վարակամերժության ապահովում:

- Անասնաբուժական ծառայություններ ծրագրի բյուջեն կազմում է 1,9554 մլն դրամ, որը նախորդ տարվա համեմատությամբ նվազել է 498.8 մլն դրամով ակմ 20.3 տոկոսով:
- Ծրագրային ռեսուրսների կրճատումը պայմանավորված է գյուղատնտեսական կենդանիների պատվաստմանը, նաև խոշոր եղջերավոր կենդանիների հաշվառմանը և համարակալմանն ուղղվող ռեսուրսների կրճատմամբ:
- Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել ախտորոշիչ և կանխարգելիչ (պատվաստումներ) միջոցառումներ և 195,400 խոշոր եղջերավոր կենդանու համարակալում:

| Ծրագիր/միջոցառում | 2023 մլն դրամ | 2024 մլն դրամ | 2024 կշիռ | 2024/2023 տոկոս |
|---|---|---|---|---|
| **Անասնաբուժական ծառայություններ** | **2,454.2** | **1,955.4** | **100.0** | **-20.32** |
| Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում | **2,147.7** | **1,300.0** | **66.5** | **-39.47** |
| ՀՀ-ում խոշոր եղջերավոր կենդանիների համարակալում և հաշվառում | **306.5** | **155.4** | **7.9** | **-49.30** |
| Կովերի արհեստական սերմնավորման միջոցառումների իրականացում | - | **500.0** | **25.6** | - |

Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն, ՏԶՀԿ հաշվարկներ

**90%** ՀՀ-գյուղատնտեսական կենդանիների վարակամերժության ապահովում, 2024թ.

**97%** ՀՀ-ում գյուղատնտեսական կենդանիների համարակալման և հաշվառման ապահովում, 2024թ.

Տնտեսական զարգացման և
հետազոտությունների կենտրոն (EDRC)
+374(0) 55 540 289
info@edrc.am
www.edrc.am